ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն 0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13՝՝, հեռ.՝ (011) 90 00 02

№ 18-9069-23
«11» 09 2023թ.

Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ
ՀՎՀՀ 26590795
Էլ .փոստ. paylak.tevanyan@gmail.com
Հեռ. 094266274

ԾԱՆՈՒՑՈՒՄ

28.03.2023թ. ԷԱՃԱՊՁԲ ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ»-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ» -ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 28.03.2023 թվականին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով հուշանվերների մատակարարման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց, նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն գնորդն իրավունք ունի, Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետներում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում, հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն, այն է .

2. Պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

3. Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վաճառողը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն՝ ղեկավարվելով վերոհիշյալ իրավական հիմքերով, 2023 թվականի սեպտեմբերի 11-ին որոշում է կայացրել միակողմանի լուծել 28.03.2023 թվականին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով Պայմանագիրը:

Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ առ այն,որ պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման գումարը կազմում է 204900 /երկու հարյուր չորս հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900008000664» հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է 307350/երեք հարյուր յոթ հազար երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել «900008000698» հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ նաև այն մասին, որ եթե մինչև սույն թվականի սեպտեմբերի 22-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերոհիշյալ պայմանագրի, որակավորման գումարները, ապա Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվեհամարներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023 թվականի սեպտեմբերի 25-ը ներկայացնել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գնումների բաժին, N4 սենյակ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԵՐԱՍԻՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ գնումների բաժնի պետ
Սոնա Ղազարյան, հեռ. 011 90 00 49